

## Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն Ը

Պատմական անցյալում չափազանց մեծ և ուշագրավ է եղել էջմիածնի դերը Հայ ժողովրդի հասարակական կյանքում: Էջմիածինը եղել է Հայ ժողովրդի կուլտուրայի կարևոր օջախներից մեկը: Այն եղել է և կրոնական-ազգային, և ժամանակի պահանջների համեմատ զեկամարող դեր է ունեցել Հայ ժողովրդի Դյանքում: Նրա ձեռքումն էին կենտրոնացած կրթական-դպրոցական հաստատությունները, բարեգործական հիմնարկությունները, եկեղեցական-կրոնական ամեն տեսակի հիմնարկները և, բացի այդ, նրանում էր կենտրոնացած արդի հավաքական կամքն արտահայտող Ֆունկցիան՝ ինչպես պետական օրգանների հետ կապ և հարաբերություն պահպանելու, նույնպես և ազդի իղձերն ու ցանկությունները ներկայացնելու և որոշ առաջադրանքները անելու տեսակետից:

Եվ այդ հասկանալի ու բացատրելի էր այն ժամանակներում, երբ Հայ ժողովուրդը չուներ իր պետականությունը, չուներ իր տերիտորիան, իր ինքնուրույնությունը:

Հոկտեմբերյան ուժեղացիայից հետո դրությունը արմատապես փոխվեց: Հայ ժողովուրդը չնորհիվ Մեծ Հոկտեմբերի ստացավ իր տերիտորիան, ստեղծեց պետականություն և բնականաբար տեր դարձավ կարգով սահմանված իր բոլոր իրավունքներին: Միանգամայն պարզ և հասկանալի է, որ էջմիածինը պիտի մնար

սուկ կրոնական հաստատություն: Այդ ինքնին բնական էր և այդպես էլ եղավ:

Հայաստանի նորակազմ Սովետական Ռեսպուբլիկան հայտարարեց խղճի ու կրոնի ազատություն և եկեղեցու անջատումը պետությունից: Դրանով իսկ էջմիածինը հնարավորություն ստացավ անկաշկանդ կրոնական գործունեություն: Ինչպես հայտնի է, 1932 թ. և 1941 թ. էջմիածնում տեղի ունեցան երկու համազգային ժողովներ կաթողիկոս ընտրելու և այլ եկեղեցական կարևոր խնդիրներ քննելու համար: Իսկ 1943 թ. ժողովուրդսովետի կից կազմակերպվեց Հայ Լուսավորչական եկեղեցու Գործերի Խորհուրդ, որը իրականացնելու է կապը Հայկական ՍՍՌ Կառավարության և Ամենայն Հայոց կաթողիկոսի միջև այն հարցերի շուրջը, որոնք Հայկական ՍՍՌ Կառավարության լուծումն են պահանջում:

Պետական այս կարևոր ակտը հնարավորություն է ընձեռում էջմիածնին դյուրություն և արագորեն լուծելու եկեղեցական այն բոլոր հարցերը, որոնք կարող են ծագել իր գործունեության ընթացքում: Էջմիածնի միաբանությունը մնում է լրջմտորեն սպասարկելու ժողովրդի հոգևոր գործերին, եկեղեցիները բարեկարգելու և հոգևոր կազմերով ապահովելու այն:

Այս խնդիրները օր առաջ լուծելու համար ոգի ի բռին, անխոնջ կերպով աշ-

խառում է Ամենայն Հայոց կաթողիկոսի ազգընտիր տեղակալ ամենապատիվ տեր Գևորգ արքեպիսկոպոս Չորեքշաբթի:

Ականատեսը միայն կարող է զգալ նրա գործի ծանրութունը և տեսնել նրա անսահման աշխատանքը: Նա և՛ քարոզիչ է, և՛ խրատուսող, և՛ դեկալոգ, նա կարողանում է և՛ առօրյա խնդիրներին ընթացք տալ, և՛ իր բաղձաթիվ այցելուներին բաժարարել, և՛ միաժամանակ իր հիմնական աշխատանքները կատարել, էջմիածինը բարեկարգել, բարգաւրդել, վանական կազմեր ընտրել, դաստիարակել և պետութան հետ առնչվող խնդիրները լուծել և, որ գլխավորն է, վանքը և եկեղեցիները պահպանելու և զարգացնելու համար նյութական-տնտեսական բազա ստեղծել, միջոցներ հայթայթել: Եվ այս բոլորը կատարելու համար նա հարկադրված է նվիրել իր ամբողջ ժամանակը, աչքաթող չանելով հիմնականն ու կարևորը: Այդ բոլորը արվում է տոկոսազուրկ, բարեխղճությամբ և համբերությամբ:

Ե՞րբ է հանգստանում Ամենապատիվ Տ. Տեղակալը և արդյո՞ք հանգստանում է: Ես այդ դեռ ևս չեմ կարողանում պատկերացնել: Մայր Աթոռում և Երևանում եղածս ժամանակ ես նրա հանդիսը չտեսա, շարունակ զբաղված, միշտ գրասեղանի առաջ, հեռախոսի կամ գրամեքենայի առաջ:

Հիշատակելին և ընդդեմելին այն է, որ նա ատիճանաբար, բայց հաստատուն քայլերով հասնում է իր կանխորոշած նպատակներին: Վեհարանի և կից շենքերի ընթացիկ նորոգումը, վանքի շրջակայքի ցանկապատումը, ծաղկազարդելու և կանաչազարդելու աշխատանքները, «էջմիածին» ամսագրի և էջմիածնի օրացույցի հրատարակությունը, այս բոլորը արդյունք են Տ. Տեղակալի անխոնջ գործունեության: Ավելորդ է արդեն շեշտել ամենօրյա ուխտավորների, հյուրերի ընդունման, նրանց հարցասիրությունը բավարարելու միջոցառումները և այլն:

Ս. էջմիածնի ներկա բարեկարգ վիճակը և Սրբազան տեղակալի այդ զվարթ, բերկրալից աշխատանքը իմ մեջ զարթեցնում է անցյալի հուշեր հայոց կաթողիկոսների և էջմիածնի մասին ցարական ու միմի օրով: Վերակենդանանում են մոռյալ տեսարաններ, որոնց ես ականատես եմ եղել պատանի հասակում, երբ ուսանում էի հոգևոր ճեմարանում:

Ահա հայ եկեղեցական կալվածների գրավումը ցարական կառավարութան կողմից: Կողակների սև հարյուրյակային հորդաները վխտում են էջմիածնում, ճեմարանի բակում, Վաղարշապատի բոլոր անկյուններում: Արգելված է մտնել անտառ, այնտեղ չըջում է ցարական պահակը: Խրիմյան կաթողիկոսը ի նշան բողոքի թողել է վեհարանը և տեղափոխվել Գայանեի վանքի անշուք խուցերից մեկը: Ահ ու սարսափ է տիրում ամենուրեք, միաբանները փախված են իրենց խցերում: Տաճարի բակում ահավոր լուռություն է: Լուռությունը երբեմն ընդհատվում է ցարական գործակալների լիտի հոհոցով: Նըրանք չըջում են տաճարի բակում:

Մի այլ տեսարան: Ծարաթ երեկո է: էջմիածնի տաճարում հանդիսավոր ժամերգություն է հավատացյալների խուռն բաղնիքյան ներկայությունը: Ժամերգությանը ներկա է Խրիմյան կաթողիկոսը, ողջ միաբանությունը և ճեմարանի աշակերտությունը: Երեկոն հանդիսավոր է և վեհ: Եվ այդ վայրկյանին հանկարծ տաճար են մտնում հարած ցարական պաշտոնյաները իրենց շներով: Լսվում է շների վնգստոցը... Վրդովվում է հավատացյալների բաղնիքյունը իր հովվապետի և ողջ միաբանություն հետ...:

Բայց ի՞նչ կարող էին անել: Ոչինչ... Իցկ ա՞յժմ, Սոլեռական օրերում: Այժմ «աստուածապաշտութիւնն բարձրագույն կամակարգութեամբ երևելի լինի յաշխարհին Հայոց» (եղիչ է):